

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.137>

## The Emergence of the First Dissident Organizations and the Dynamics of Ideological Development in Soviet Armenia in the Early 1960s

Shahen Harutyunyan

<https://orcid.org/0009-0007-8494-1113>

YSU Faculty of History, Applicant at the Chair of Armenian History

[sh.harutyunyan.edu@gmail.com](mailto:sh.harutyunyan.edu@gmail.com)

**Keywords:** dissent, USSR, "Khrushchev Thaw", Cold War, "Armenian Youth Union", "Armenia Reunification Movement", "Union of Armenian Patriots", "National United Party", "Shant".

*The internal political processes known as the "Khrushchevian thaw" and the Cold War's steady intensification in the 1960s made it easier for dissident movements and ideas to emerge throughout the USSR's republics. Under the totalitarian Soviet regime, dissident movements emerged and were organized by clandestine groups. Dissident groups emerged in Soviet Armenia throughout the 1960s and 1980s, primarily assuming control over the structure and direction of the dissident movement.*

*This article's goal is to examine and provide a thorough overview of the dissident groups that were established in Soviet Armenia in the early 1960s, as well as their operations.*

*Researching and debating the dissidents that emerged in the USSR and the dynamics of their development—which influenced the emergence of dissident groups in Soviet Armenia—was the work assigned in order to achieve the aim.*

*A historical and comparative approach was taken in doing the research. Interviews, archived materials, and governmental papers were all subjected to content analysis.*

*It was suggested that the USSR's second ideological battle began at the front of the dissent that emerged from both internal and exterior political events occurring in the Soviet Union. As dissident ideas gained traction in Soviet Armenia, a dissident struggle emerged. This fight grew more structured as dissident groups were established.*

*The conclusion is that the dissident groups in Soviet Armenia, which emerged at the start of the 1960s, planned the continuous movements and were primarily responsible for planning and carrying out the conflict. The creation of the "National United Party" was crucial in fortifying Armenia's vision of independence and completing the attitudes toward it that had prevailed up to that point.*

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 137-150



Received: 05.06.2024

Revised: 08.07.2024

Accepted: 31.08.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

**Այլախոհական առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման դինամիկան Խորհրդային Հայաստանում 1960-ականների սկզբին**  
**Այլախոհական առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման դինամիկան Խորհրդային Հայաստանում 1960-ականների սկզբին**

**Շահեն Հարությունյան**

ԵՊՀ պատմության ֆակուլտետ, հայոց պատմության ամբիոնի հայցորդ

**Հիմնաբառեր՝** այլախոհություն, ԽՍՀՄ, «Խրուշչովյան հալոցք»,

Սառը պատերազմ, «Հայ երիտասարդական միություն»,

«Հայաստանի վերամիավորման շարժում», «Հայ հայրենասերների միություն»,

«Ազգային Միացյալ կուսակցություն», «Շանթ»:

*1960-ական թվականներին «Խրուշչովյան հալոցք» կոչվող ներքաղաքական գործընթացները և հետզհետե սաստկացող Սառը պատերազմը, նպաստավոր պայմաններ ստեղծեցին ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում այլախոհական մտքի և շարժումների ձևավորման համար: Խորհրդային բռնատիրական իրականությունում առաջացան այլախոհական շարժումներ, որոնք կազմակերպված բնույթ ստացան ընդհատակյա կազմակերպությունների միջոցով: 1960-80-ական թվականներին Խորհրդային Հայաստանում նույնպես ձևավորվեցին այլախոհական կազմակերպություններ, որոնք հիմնականում իրենց վրա ստանձնեցին այլախոհական պայքարի կազմակերպումը և ընթացքը:*

*Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել և բազմակողմանի ներկայացնել Խորհրդային Հայաստանում 1960-ականների սկզբին ձևավորված այլախոհական կազմակերպությունները և դրանց գործունեությունը:*

*Նպատակն իրականացնելու համար խնդիր է դրվել հետազոտել և քննարկել ԽՍՀՄ-ում առաջացած այլախոհությունը և դրա զարգացման դինամիկան, որոնք իրենց ազդեցությունն ունեցան Խորհրդային Հայաստանում այլախոհական կազմակերպությունների ձևավորման համար:*

*Հետազոտությունը կատարվել է պատմական, պատմահամեմատական մեթոդների միջոցով: Իրականացվել է պետական փաստաթղթերի, արխիվային նյութերի, հարցրագրույցների կոնտենտ վերլուծություն:*

*Հիմնավորվել է, որ Խորհրդային Միությունում տեղի ունեցող ներքաղաքական և արտաքին քաղաքական գործընթացների արդյունքում ձևավորված այլախոհությունը երկրորդ գաղափարական հակամարտության ճակատը ստեղծեց ԽՍՀՄ-ի համար: Այլախոհական միտքն ամրապնդվելով Խորհրդային Հայաստանում՝ առաջացրեց այլախոհական պայքար, որը դարձավ ավելի կազմակերպված այլախոհական կազմակերպությունների ձևավորումից հետո:*

*Եզրակացությունն այն է, որ Խորհրդային Հայաստանում այլախոհական կազմակերպությունները, որոնք ձևավորվել էին 1960-ական թվականների սկզբից,*

կազմակերպված բնույթ հաղորդեցին ընթացող շարժումներին և հիմնականում իրենց վրա վերցրին պայքարի կազմակերպումն ու իրագործումը: Հայաստանի անկախության գաղափարի ամրապնդման համար կարևոր նշանակություն ունեցավ «Ազգային Միացյալ կուսակցության» հիմնադրումը, որը ամբողջացրեց մինչ այդ գոյություն ունեցող անկախության գաղափարին միտված տրամադրությունները:

### Возникновение первых диссидентских организаций и динамика идеологического развития в Советской Армении в начале 1960-х гг.

Шаген Арутюнян

Исторический факультет ЕГУ, соискатель кафедры истории армении

**Ключевые слова:** инакомыслие, СССР, «Хрущевская оттепель», Холодная война, «Союз армянской молодежи», «Движение воссоединения Армении», «Союз армянских патриотов», «Национальная объединенная партия», «Шант»

*Возникновение первых диссидентских организаций и динамика идеологического развития в Советской Армении в начале 1960-х гг.*

*Внутриполитические процессы, известные как «хрущевская оттепель», и неуклонное обострение «холодной войны» в 1960-е годы облегчили возникновение диссидентских движений и идей во всех республиках СССР. При тоталитарном советском режиме возникли диссидентские движения, организованные подпольными группами. Диссидентские группы возникали в Советской Армении на протяжении 1960-х и 1980-х годов, в первую очередь взяв на себя контроль над структурой и направлением диссидентского движения.*

*Цель этой статьи — изучить и дать подробный обзор диссидентских групп, созданных в Советской Армении в начале 1960-х годов, а также их деятельности.*

*Исследование и обсуждение диссидентов, возникших в СССР, и динамики их развития, повлиявшей на возникновение диссидентских группировок в Советской Армении, было работой, направленной на достижение этой цели.*

*В ходе исследования был использован историко-сравнительный подход. Интервью, архивные материалы и правительственные документы были подвергнуты контент-анализу.*

*Высказывалось мнение, что вторая идеологическая битва в СССР началась на фронте инакомыслия, возникшего в результате как внутриполитических, так и внешних политических событий, происходящих в Советском Союзе. По мере того как диссидентские идеи набирали силу в Советской Армении, возникла диссидентская борьба. Эта борьба стала более структурированной по мере создания диссидентских групп.*

*Делается вывод, что диссидентские группы в Советской Армении, возникшие в начале 1960-х годов, планировали непрерывные перемещения и несли основную ответственность за планирование*

**Այլախոհական առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման դինամիկան Խորհրդային Հայաստանում 1960-ականների սկզբին**

*и проведение конфликта. Создание «Национальной объединенной партии» имело решающее значение для укрепления видения независимости Армении и завершения преобладавшего до этого момента отношения к ней.*

\* \* \*

**Ներածություն:** Երկրորդ համաշխարհային պատերազմում Արևմտյան բևեռի և Խորհրդային Միության հաղթանակից հետո աշխարհը բաժանվեց երկու ազդեցության գոտիների՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ Արևմտյան կապիտալիստական բևեռի՝ հիմնված լիբերալ ժողովրդավարության վրա և Խորհրդային Միության՝ կոմունիստական տնտեսություն ունեցող երկրների և ոչ ժողովրդավարական վարչակարգերի միջև: Երկու կողմերի միջև հակամարտության լարումը հանգեցրեց համաշխարհային նոր հակամարտության, որը պատմության մեջ հայտնի է Սառը պատերազմ անունով: Սառը պատերազմը XX դարի ամենանշանակալի իրադարձություններից մեկն էր: Թեև Սառը պատերազմը հիշվում է իր ժամանակի ընթացքում տեղի ունեցած շատ կարևոր իրադարձություններով, ներառյալ լոկալ պատերազմները, սակայն Սառը պատերազմը, ըստ էության, գաղափարախոսական հակամարտություն էր Արևմուտքի և ԽՍՀՄ-ի միջև: Մեծ Բրիտանիայի վարչապետ՝ Ուինսթոն Չերչիլը, Ֆուլտոնյան ճառով ազդարարեց Արևմուտք-ԽՍՀՄ նոր հակամարտությունը՝ միմյանց միջև բաժանարար գիծը կոչելով «երկաթե վարագույր» [Applebaum, 2012, 23]: «Երկաթե վարագույրը» բնութագրում էր Խորհրդային բիրտ, դաժան, միակուսակցական, կոմունիստական համակարգը, որտեղ ճնշվում էր այլակարծության ցանկացած դրսևորում: Այլակարծության ամենավոքոր դրսևորումը պատժվում էր արքունիքով, բանտարկություններով և մահապատիժներով: Խորհրդային Միությունը կայսրություն էր՝ ներփակված սեփական արժեհամակարգի և գաղափարախոսության մեջ՝ շրջապատված երկաթե վարագույրներով: Խորհրդային հալածանքների գագաթնակետը Ստալինյան ժամանակաշրջանն էր, երբ ամենադաժան հալածանքներն էին իրականացվում ԽՍՀՄ ժողովուրդների նկատմամբ [McLoughlin, McDermott, 2002, 24]: Սակայն Խորհրդային իրականությունը փոքր-ինչ փոխվեց հետստալինյան ժամանակահատվածում:

Սառը պատերազմի հիմնական դրսևորումը՝ գաղափարախոսական հակամարտությունը, 1960-ականներից ճեղքում է Խորհրդային իրականությունը՝ ճաքեր ստեղծելով ԽՍՀՄ հասարակական միջավայրում: 1960-ական թվականներից, երբ Խորհրդային Միությունում հետստալինյան ժամանակաշրջանին բնորոշ «Խրուշչովյան հալոցքն» էր, ռուսական կայսրության տարբեր հանրապետություններում սկսում են ձևավորվել ազգային, անկախական, կրոնական ընդհատակյա կազմակերպություններ [Bittner, 2008, 174]: ԽՍՀՄ տարբեր ժողովուրդների մեջ առկա տարատեսակ հակախորհրդային տրամադրությունները կենտրոնացվում և կազմակերպված բնույթ են ստանում՝ քաղաքական և ազգային դիմագծերը դեռ պահպանած հասարակական և մտավորական շերտերի կողմից: Խորհրդային կարգերից դժգոհ անհատների պայքարը, 1960-ական թվականներից իր տեղը զիջեց ավելի կազմակերպված և հանդուգն հակախորհրդային պայքարի ճանապարհ սկսած կազմակերպություններին: Մարդու

իրավունքների, ազգային հարցերի, ԽՍՀՄ-ից անկախանալու համար պայքարը բարձրանում է նոր մակարդակի: Տարբեր հանրապետություններում ձևավորված խմբերը և կազմակերպությունները հակախորհրդային գործունեությամբ գաղափարական լուրջ սպառնալիք են դառնում Խորհրդային բռնատիրական վարչակարգի համար:

ԽՍՀՄ տարածքում այլախոհական շարժումների և կազմակերպությունների առաջացումն ու գործունեությունը ստեղծում են գաղափարական երկրորդ ճակատը՝ ընդդեմ Խորհրդային պետության: Ըստ էության, Խորհրդային ազատամիտ շրջանակները, պայքարելով սեփական իրավունքների պաշտպանության, անկախության վերականգման համար, մաս են դառնում համաշխարհային հակամարտությանը՝ Սառը պատերազմին: Այստեղ կարևոր ենք համարում ընդգծել, որ, թեև այլախոհական շարժումների ձևավորման և զարգացման համար նպաստավոր պայմաններ էր առաջացել ԽՍՀՄ-ի և Արևմուտքի միջև ընթացող Սառը պատերազմի արդյունքում կոմունիստական գաղափարախոսության թուլացման և հասարակության շրջանում ազատամտության տարածման հետևանքով, այնուամենայնիվ, ազատության, անկախության, մարդու իրավունքների պաշտպանության համար պայքարի դուրս եկած մարդիկ ոչ թե Արևմուտքի ձեռքում գործիք էին ԽՍՀՄ-ը ներսից կազմաքանդելու համար, այլ հայրենասիրական ազատատենչ շրջանակներ, ովքեր, գտնվելով Արևմտյան ճամբարի հետ նույն գաղափարական և շահերի գոտում, պայքար էին տանում ընդհանուր թշնամու դեմ:

Այլախոհական շարժումների թափ հավաքելուն զուգահեռ 1967 թ. ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի նորանշանակ ղեկավար Յուրի Անդրոպովը նախաձեռնում է քաղաքական հակահետախուզության 5-րդ վարչության ստեղծումը: 1967 թ. հուլիսի 3-ին ԽՍԿԿ կենտկոմն ընդունում է N1631-A որոշումը՝ «Հակառակորդի գաղափարական դիվերսիայի դեմ պայքարի անկախ վարչություն ստեղծելու նպատակահարմարության մասին» [Բոժկով, 2021, 130]: Հատկանշական է, որ ՊԱԿ ղեկավար Յուրի Անդրոպովն իր ելույթում անդրադառնալով ԽՍՀՄ տարածքում 1965-66 թվականներին բացահայտված շուրջ 50 ազգայնական խմբավորումներին և կազմակերպություններին, նշում է, որ Արևմուտքը ձգտում է գաղափարական ճակատում գործողությունները տեղափոխել անմիջապես ԽՍՀՄ տարածք՝ նպատակ ունենալով հասնել Խորհրդային հասարակության գաղափարական քայքայմանը [Բոժկով, 2021, 130]:

Քաղաքական հակահետախուզության 5-րդ վարչության ստեղծումն ու այդ առթիվ Անդրոպովի ելույթը ցույց են տալիս, որ 1960-ականներից կազմակերպչական բնույթ ստացած այլախոհական շարժումները ժամանակին զուգընթաց դառնում էին առավել սպառնալից Խորհրդային իշխանությունների համար, որի պատճառով էլ իշխանությունները փորձեցին նոր միջոցներ ներդնել այլախոհական շարժումները բացահայտելու և վերացնելու համար: Սակայն ինչպես ցույց տվեց պատմության հետագա ընթացքը, այլախոհական շարժումները ոչ միայն չվերացան, այլ նաև շարունակվեցին՝ ընդհուպ ԽՍՀՄ փլուզում: Այլախոհական ակտիվ շարժումներ էին ընթանում ԽՍՀՄ կազմի մեջ՝ Ուկրաինայում, Լատվիայում, Լիտվայում, Էստոնիայում, Հայաստանում և Վրաստանում [Алексева, 2012, 7-88]:

Խորհրդային Հայաստանում այլախոհական դրսևորումները նկատելի են 1950-ական թվականներից, որոնք կրել են անհատական բնույթ: Հիմնականում տարածվել են հակախորհրդային բնույթի նամակներ, թռուցիկներ, որոնք ՊԱԿ-ի կողմից բացահայտվել են,

**Այլախոհական առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման դինամիկան Խորհրդային Հայաստանում 1960-ականների սկզբին**

որոնց արդյունքում տեքստերի հեղինակները մեծ պատժաչափերով բանտարկվել են [Հարությունյան Վ., 2014, 28-30]:

1960-ական թվականների սկզբից Խորհրդային Հայաստանում այլախոհությունը նոր որակ է ստանում՝ սահմանելով գաղափարապես ավելի խորը նպատակադրումներ: Այլախոհական մտքի ձևավորումն ու զարգացումը, գաղափարական խորը նպատակադրումները կարևոր գործոններ էին, որոնց հիման վրա այլախոհությունը ձեռք բերեց առավել կազմակերպված բնույթ: Ուսումնասիրելով այլախոհական շարժումների զարգացման դինամիկան Խորհրդային Հայաստանում՝ նկատում ենք, որ 1960-ական թվականներից Խորհրդային Հայաստանում ստեղծվում են այլախոհական կազմակերպություններ, որոնք, ամբողջացնելով մինչ այդ գոյություն ունեցող այլախոհական և հայրենասիրական տրամադրությունները, ավելի կառուցողական բնույթ հաղորդեցին այլախոհական շարժումներին և դրանց նպատակներին: Այլախոհական կազմակերպությունները, թեև ընդհատակյա ձևավորված և գործող կառույցներ էին, այնուամենայնիվ, մեծ ազդեցություն ունեցան այլախոհական մտքի ամրապնդման և հասունացման գործընթացում, ինչպես նաև մեծ դերակատարում ունեցան Խորհրդային Հայաստանում այլախոհական չդադարող պայքարի գործում, որը շարունակվեց մինչև ԽՍՀՄ փլուզումը: Այլախոհական կազմակերպությունները նոր որակ և բնույթ հաղորդեցին այլախոհական պայքարին՝ այդպիսով այլախոհությունն ավելի խնդրահարույց դարձնելով Խորհրդային պետության համար:

Ուսումնասիրելով այլախոհական շարժումների պատմությունը Խորհրդային Հայաստանում՝ տեսնում ենք, որ թեև այլախոհությունն ունեցել է տարբեր դրսևորումներ, այնուամենայնիվ, կարող ենք փաստել, որ Խորհրդային Հայաստանում 1960-80-ական թվականներին ընթացած այլախոհական շարժումներն ու պայքարը հիմնականում ձևավորված են եղել շուրջ մեկ տասնյակ այլախոհական կազմակերպությունների շուրջ, որոնք տարբեր ժամանակագրական փուլերում ունեցել են իրենց գաղափարաբանությանը բնորոշ դերակատարում և ազդեցությունը՝ իրենց վրա վերցնելով տվյալ ժամանակագրական շրջափուլում այլախոհական պայքարի կազմակերպումն ու իրականացումը:

Հաշվի առնելով այլախոհական կազմակերպությունների դերն ու նշանակությունը Խորհրդային Հայաստանում ընթացող այլախոհական շարժումներում՝ մեր առջև խնդիր ենք դրել ուսումնասիրել և վերհանել վերոնշյալ այդ կազմակերպությունները և դրանց առնչվող պատմական իրողությունները, ներկայացնել ծավալած գործունեությունը և այլախոհական շարժումներին ներգրավվածության ձևաչափերն ու միջոցները: Այս ամենն իր կարևոր նշանակությունն ունի արդի ժամանակներում, երբ առաջնայինն է անկախ Հայաստանում ծնված սերունդներին պատմական փաստերով և մանրամասնություններով ներկայացնել Հայաստանի անկախության և հայ ժողովրդի ազատության համար մղված պայքարը:

Խորհրդային Հայաստանում ձևավորված այլախոհական կազմակերպությունների ուսումնասիրումը կիրականացնենք երկու փուլով: Սույն հոդվածում կներկայացնենք 1960-ականների սկզբին ձևավորված կազմակերպությունները՝ հասնելով մինչև Ազգային Միացյալ

կուսակցության հիմնադրումը, որը անկախության համար պայքարի գաղափարական ամենահասուն, կազմակերպված և իրեն կուսակցություն հռչակված կառույցն էր ոչ միայն Խորհրդային Հայաստանում, այլ նաև, ԽՍՀՄ միակուսակցական ամբողջ համակարգում:

**Առաջին այլախոհական կազմակերպությունների առաջացումը Խորհրդային Հայաստանում:** Խորհրդային Հայաստանում այլախոհությունը կազմակերպված բնույթի դրսևորման առաջին օրինակը 1962 թ. Երևանում ստեղծված «Հայ երիտասարդական միություն» (այսուհետ՝ ՀԵՄ) անունը կրող հայրենասիրական խմբակն էր, որտեղ հավաքված էին հասարակության տարբեր շերտեր՝ ուսանողներից մինչև դասախոսներ և մտավորականներ: Այս խումբը թեև կազմակերպություն էր, սակայն չունեւ ծրագիր, կանոնադրություն: Խումբն առավել շատ գործում էր տեղային հայրենասիրական դաշտում և ընդհանուր առմամբ չունեւ հակախորհրդային բնույթ: Հիմնական շոշափվող թեմաներն էին հայոց լեզվի պահպանումը, Ցեղասպանության հիշատակի օրը նշելը, կորցված հայկական տարածքների վերադարձնելը: Սակայն «ՀԵՄ»-ի ակտիվ անդամներ՝ Խաչատուր Ամիրջանյանը, Խաչիկ Սաֆարյանը, Վիգեն Բաբայանը, Գրիգոր Եղյանը, Էդուարդ Կակոյանը, Կարապետ Քիրամիջյանը և Մերուժան Հովհաննիսյանը սկսում են գործել առավել կազմակերպված: Նրանք կազմակերպությանը հաղորդում են ավելի գործնական բնույթ: Կազմակերպում են հանդիպումներ, իրականացնում հակախորհրդային բովանդակությամբ քննարկումներ, տպագրում հակախորհրդային հոդվածներ և հայրենասիրական բանաստեղծություններ: Այդ ժամանակահատվածում տպագրվել են «Հայկական դատի 85 տարին», «Հայրենասերների համամիութենական ընկերության հայտարարությունը», «Թանկագին հայրենակիցներ», «Ի՞նչն է ազգերի միաձուլումը և ով է ձգտում նրան», «Ողջուն Կիրովաբադի հայ բարեկամներին», «Տեսություն մարդկային պատմության մասին» գլխագրերով հոդվածները, «Կտակ հայ որդուն» պոեմը: Կազմակերպությունը զբաղվել է նաև տարատեսակ արգելված հայրենասիրական, հակախորհրդային, ազգայնական գրականության տարածումով՝ նպատակ ունենալով հասարակության լայն շերտերի մեջ առաջացնել հայրենասիրական տրամադրություններ և ներգրավել այլախոհական շարժման մեջ [ՀԱԱ ֆ. 1191, ց. 20, գ. 2, թթ. 4-7]: Խմբի անդամներն իրենց հանդիպումների և հավաքույթների ընթացքում, երբ քննարկել են ազգային տարբեր հարցեր, կարևոր տեղ են հատկացրել հայոց լեզվի մաքրության պահպանությանը և ռուսական լեզվի մեջ միաձուլվելուց փրկելու հարցերին:

ՀԵՄ-ի անդամներն իրենց գործունեությունը առավել կազմակերպված դարձնելու նպատակով, հանդիպումների ընթացքում քննարկել են անդամավճարներ հավաքելու հարցը, որը հնարավորություն կտար լուծելու կազմակերպության առաջ ծառայած ֆինանսական խնդիրները, ինչպիսիք էին՝ տպագրական մեքենայի մասերի պատրաստումը, հավաքույթների համար վարձակալված սենյակի վարձավճարը և այլ նյութական հարցեր: Հավաքված անդամավճարները հնարավորություն են տվել խմբի անդամներին մեկնելու Հայաստանի տարբեր շրջաններ և Լեռնային Ղարաբաղ՝ համախոհներ գտնելու և այլախոհական շարժումներն ուժեղացնելու նպատակով:

ՀԵՄ-ի «7-ի խորհուրդը» ձեռքակալվում է 1963 թ., և 1964 թ. օգոստոսի 5-26-ը տեղի ունեցած դատաքննության արդյունքում մեղավոր են ճանաչվում ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65 հոդվածի 1-ին մասով (հակասովետական ագիտացիա և պրոպագանդա) և 67-րդ հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական

**Այլախոհական առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման դինամիկան Խորհրդային Հայաստանում 1960-ականների սկզբին**

գործունեությունը, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը մասնակցելը) [ՀԱԱ ֆ. 1191, ց. 20, գ. 2, թթ. 17-20]:

1966-67 թվականներին Խորհրդային Հայաստանում գործունեություն է ծավալել «Հայաստանի վերամիավորման շարժում» ընդհատակյա կազմակերպությունը: Խումբը կրել է ազգային-հայրենասիրական գաղափարներ, որոնք նաև ունեցել են հակախորհրդային որոշ դրսևորումներ: Խմբի գործունեության առանցքային քայլերից են եղել Ղարաբաղի և Նախիջևանի մասին տարածված ազգային բնույթի թռուցիկներ, որով խմբի անդամները Խորհրդային իշխանություններին մեղադրում էին հայկական հարցերը խորհրդա-թուրքական հարաբերություններում՝ ի վնաս հայ ժողովրդի օգտագործելու և հայ ժողովրդի իրավունքներն ու նվիրական զգացմունքները ոտնահարելու համար [Հարությունյան Վ., 2014, 60]:

Խմբի հիմնական նպատակների մասին ընդհանուր պատկերացումներ կարող ենք կազմել այս կազմակերպության կենտրոնական խորհրդի կողմից պատրաստված թռուցիկի բովանդակությունից: Այդ թռուցիկի միջոցով կոչ էր արվում հայ ժողովրդին միանալ հայկական հողերի՝ Խորհրդային Հայաստանին միավորելու պայքարին: Նշվում էր, որ միասնական պայքարը տալիս է իր որոշ արդյունքները, քանի որ Խորհրդային իշխանությունները սկսել են մասամբ քննարկել այդ թեմաները: Խումբը կոչ էր անում հայ ժողովրդին ավելի ուժգնացնել պայքարը, օգնել Խորհրդային Հայաստանի կառավարությանը՝ օգտագործելով բոլոր միջոցները՝ կուսակցական ժողովները, զանազան միջոցառումներ, անհատական և խմբային նամակների առաքում, ստորագրությունների հավաքում և այլն [Պարույր Հայրիկյան անձնական արխիվ]:

Տարածված այս թռուցիկից ավելի պարզ է դառնում, որ խմբի կարևոր նպատակը հայկական հողերի վերամիավորումն էր մայր հայրենիքին, որի իրականացմանը հասնելու նպատակով կոչ էր արվում հայ ժողովրդին նաև սատարել Խորհրդային Հայաստանի կառավարությանը, որոնք նույնպես կիսում էին կազմակերպության նպատակները:

«Հայաստանի վերամիավորման շարժում» կազմակերպության դատավարությունը տեղի է ունեցել 1967թ. նոյեմբերի 25-29-ին, որի ընթացքում մեղադրվում էին Մարտին Նալբանդյանը, Ալբերտ Ղուբասարյանը, Սուրիկ Սարգսյանը, Մկրտիչ Մովսիսյանը, Արկադի Հայրապետյանը, Ռուբեն Սաֆարյանը, Իվան-Վանիկ Ստեփանյանը: Կազմակերպության անդամները մեղադրվել և դատապարտվել են ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 206<sup>1</sup> հոդվածով (սովետական պետական կամ հասարակական կարգը արատավորող ակնհայտ կեղծ հերյուրանքներ տարածելը) [Մանուկյան, 2005, 39-40]:

1967-68 թվականներին հայկական այլախոհական շարժման մեջ գործունեություն է սկսում ծավալել «Հայ հայրենասերների միություն» ընդհատակյա կազմակերպությունը: Այս կազմակերպությունը գաղափարական առումով բազմաթիվ ընդհանրություններ ուներ «Հայաստանի վերամիավորում շարժում» կազմակերպության հետ: Ուսումնասիրելով «Հայ հայրենասերների միությունը»՝ կարող ենք ընդգծել, որ այս կազմակերպությունը, ընդհանուր առմամբ, շարունակում էր հանդես գալ ազգային-հայրենասիրական ոգով՝ հիմնական գործունեության առանցք համարելով հայոց ցեղասպանության, Ղարաբաղի, Նախիջևանի և այլ

ազգային խնդիրների մասին բարձրաձայնումը: Անհրաժեշտ է ընդգծել, որ այս կազմակերպությունը չի ունեցել հակախորհրդային բնույթ և դրսևորումներ՝ Հայաստանը շարունակելով տեսնել Խորհրդային Միության կազմում: Այս կազմակերպությունը ունեցել է անդամների ժողովի կողմից ընդունված կանոնադրություն, անդամավճարի կարգ և ընդհանուր ղեկավար Հակոբջան Թադևոսյանը:

Խմբի ղեկավար Հակոբջան Թադևոսյանի նախաձեռնությամբ 1967 թ. կազմակերպվել են գաղտնի հավաքույթներ Երևանում, Արարատում, Գյումրիում: Այս հանդիպումների ընթացքում քննարկվել են այլախոհական թռուցիկների պատրաստման և այլ կազմակերպչական հարցեր: Խմբի գործունեության համար անհրաժեշտ նյութական միջոցները հոգալու համար, խմբի անդամները հավաքել են անդամավճարներ:

1967 թ. ընթացքում խմբի անդամները տարածել են «Բաց նամակ ՄՄԿԿ-ի կենտկոմի քաղբյուրոյին», «Կրկին ռուս-թուրքական դիվանագիտության զոհասեղանին», «1921թ. մարտի 16-ին Մոսկվայում» վերնագրերով թռուցիկներ: Ըստ այս թռուցիկների բովանդակության՝ Խորհրդային կառավարությունը ոտնակոխ է անում հայ ժողովրդի օրինական կենսական շահերը՝ հոգուտ Թուրքիայի, կոպիտ ձևով ոտնահարում է ազգային արժանապատվությունը ու կրկին «հայկական հարցը» օգտագործում է որպես միջոց Թուրքիայի հետ դիվանագիտական հարցեր լուծելու նպատակով:

«Հայ հայրենասերների միության» անդամները 1967-68 թվականներին, պատրաստել և տարածել են թռուցիկներ Երևանում, Գյումրիում, Արարատի և Արտաշատի շրջաններում՝ նվիրված Մեծ եղեռնի 52-րդ և 53-րդ տարելիցներին: Թռուցիկների վերնագրված էին հետևյալ կերպ. «Կոչ հայ մտավորականությանը Մեծ եղեռնի 52-րդ տարեդարձի առթիվ», «Խոսք սրտի խորքից՝ հայոց ողբերգության 52-րդ տարեդարձի կապակցությամբ», «Կոչ հայ ժողովրդին՝ հայոց ողբերգության 52-րդ տարեդարձի կապակցությամբ», «Հիշեցում հայ ժողովրդին՝ Մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի կապակցությամբ», «Կոչ հայ մտավորականությանը՝ Մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ», «Կոչ հայ մտավորականությանը՝ Մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ» [ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 4, թթ. 4-6]:

1968 թ. ապրիլին ձեռքակալվում են խմբի անդամներ Հակոբջան Թադևոսյանը, Ռուբեն Հովսեփյանը, Էդիկ Ալեքսանյանը, Ռուբիկ Վարդանյանը, Ռաֆիկ Ղարազույանը, Միսաք Խաչատրյանը, Անդրանիկ Մխիթարյանը, Վահան Եղիազարյանը: «Հայ հայրենասերների միության» անդամները մեղադրվում և դատապարտվում են ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 206-՝ հոդվածով (սովետական պետական կամ հասարակական կարգը արատավորող ակնհայտ կեղծ հերյուրանքներ տարածելը) [ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 4, թթ. 12-14]:

**Հայաստանի անկախության համար պայքարի գաղափարախոսության ամրապնդումը և Ազգային Միացյալ կուսակցության հիմնադրումը:** Խորհրդային Հայաստանում լայնորեն տարածվող այլախոհական, տեղ-տեղ նաև անկախական գաղափարները հետզհետե ավելի էին շիկացնում հասարակական տարբեր շրջանակներում հայրենասիրական տրամադրությունները՝ ավելի հասունացնելով անկախության համար պայքարի կարևորությունը և առաջնայնությունը, ինչպես նաև՝ առավել շատ մարդկանց ներգրավելով այլախոհական շարժումների մեջ: 1966 թ. ապրիլի 24-ին հայոց ցեղասպանության 51-րդ տարելիցին նվիրված միջոցառումներն ու դրան հետևած ձեռքակալությունները բեկումնային նշանակություն ունեցան Խորհրդային

**Այլախոհական առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման դինամիկան Խորհրդային Հայաստանում 1960-ականների սկզբին**

Հայաստանում այլախոհության ընթացքի գաղափարաբանության և իմաստաբանության համատեքստում: Ցեղասպանության 51-րդ տարելիցի առթիվ Կոմիտասի այգում ցույցը ցրվում է Խորհրդային ոստիկանության կողմից, որի արդյունքում շուրջ երեք տասնայակ ցուցարարներ տեղափոխվում են Երևանի համար առաջին բանտ՝ ենթարկվելով 15-օրյա կալանքի [Ավետիսյան, 2005, 5-20]: Բանտախցում միմյանց հետ ծանոթացած Շահեն Հարությունյանը, Հայկազ Խաչատրյանը, Ստեփան Ջատիկյանը, դուրս գալով բանտից, նոր շունչ և որակ են հաղորդում այլախոհական շարժումներին ոչ միայն Խորհրդային Հայաստանում այլ նաև ամբողջ ԽՍՀՄ տարածքում:

1966 թ. հոկտեմբերին **Շահեն Հարությունյանը, Հայկազ Խաչատրյանը, Ստեփան Ջատիկյանը** հիմնում են ազատ և անկախ Հայաստան ստեղծելու գերնպատակով առաջնորդվող «Ազգային Միացյալ կուսակցությունը» (այսուհետ՝ ԱՄԿ)<sup>1</sup> [Շահեն Հարությունյան անտիպ հուշագրություն, 7]: Ինչպես նշում է հայտնի ռուս այլախոհ Լյուդմիլա Ալեքսենևան, Հայաստանը միակ երկիրն էր ամբողջ ԽՍՀՄ միակուսակցական համակարգում, որտեղ հիմնադրվել և գործում էր հակախորհրդային, անկախական կուսակցություն՝ ԱՄԿ-ն [Алексева, 2012, 85]:

ԱՄԿ-ն իր բովանդակությամբ դարձավ առաջին քաղաքական կազմակերպությունը՝ որպես առաջին կուսակցություն ԽՍՀՄ տարածքում: Այս կուսակցությունը բարձրացրեց ԽՍՀՄ-ի դեմ պայքարի և անկախ պետականություն ունենալու համար պայքարի նշանը: Այս կազմակերպությունը ոչ միայն հռչակված էր որպես կուսակցություն, այլ նաև ուներ անհրաժեշտ բոլոր տարրերը, որոնք իրապես ԱՄԿ-ն դարձնում էին կուսակցություն՝ մերօրյա պատկերացումներին համապատասխան: ԱՄԿ-ն ուներ հստակ սահմանված ծրագիր, կանոնադրություն, երդման տեքստ, անդամատոմսեր, անդամավճարի համակարգ, կնիք, հատուկ ծածկագիր՝ միմյանց հետ գաղտնի գրագրություն վարելու համար, հրապարակվող «Փարոս» թերթ [ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 5, թթ. 2-9]:

ԱՄԿ-ի ծրագիրը կազմվել է Հայկազ Խաչատրյանի կողմից, սակայն ուղղվել և վերջնական տեսքը մշակվել է Շահեն Հարությունյանի և Ստեփան Ջատիկյանի անմիջական մասնակցությամբ: Շ. Հարությունյանն անձամբ կազմել է կուսակցության կանոնադրությունը և անդամի հարցաթերթիկը, իսկ Ս. Ջատիկյանը՝ կուսակցության անդամի երդման տեքստը [Հարությունյան Շ., 2024, 37]:

1967 թ. հոկտեմբերին, ԱՄԿ հիմնադիրները 290 օրինակից տպագրել են «Փարոս» թերթի առաջին համարը, որի սկզբնամասում գրված են եղել Եղիշե Չարենցի հայտնի խոսքերից մեկը. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Թերթում տպագրվել են «Ելնում են նորերը», «Հայ ժողովրդին», «Հայաստանը լծի տակ», «Փաստերն անողոր են» և այլ

<sup>1</sup>Շահեն Հարությունյանը եղել է Ազգային Միացյալ կուսակցության երեք հիմնադիրներից մեկը: Հայաստանի անկախության պայքարի համար երկու անգամ բանտարկվել է Խորհրդային Միությունում, այնուհետև 1986 թվականին Մոսկվայի Կրեմլում ընդունված N 5813-XI որոշմամբ՝ գրկվելով ԽՍՀՄ քաղաքացիությունից, տեղափոխվել է ԱՄՆ, որտեղից էլ շարունակել է պայքարել Հայաստանի անկախության համար: Մահացել է ԱՄՆ-ում 2021 թվականին: Իր կողմից գրված հուշագրությունները, արխիվային և այլ արժեքավոր նյութեր գտնվում են իր թոռան՝ սույն հոդվածի հեղինակի, պահպանության ներքո:

հոդվածներ: Հոդվածների հեղինակներ Ն.Խաչատրյանը, Ս.Զատիկյանը, Շ.Հարությունյանը, գաղափարական քննադատության են ենթարկել «Մարքս-լենինյան» ուսմունքը, կոմունիստական գաղափարախոսությունը: Հեղինակները հայ ժողովրդի վիճակը հոդվածներում ներկայացրել են գաղութացված և կեղեքվող՝ կոչ անելով պայքարել անկախ հայկական պետություն ստեղծելու համար [ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 5, թթ. 5-7]:

ԱՄԿ-ն՝ թեև չդադարող հալածանքների, կալանավորումների, շարունակում էր պայքարը հանուն անկախ Հայաստանի ստեղծման: ԱՄԿ ծրագրի 6-րդ կետում, որը գրված էր մեծատառերով ասվում էր, որ «ԱՄԿ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Է ԱԶՏԱԳՐԵԼ ԱԶԳԸ ՕՏԱՐԻ ԼԾԻՑ, ԴՈՒՐՍ ԳԱԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԱԶՏԱ, ԱՆԿԱԽ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵԶՈՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» [Շահեն Հարությունյան անտիպ հուշագրություն, 9]:

1969 թ. հունվարին տեղի է ունենում ԱՄԿ հիմնադիրների դատավարությունը: Շահեն Հարությունյանը, Հայկազ Խաչատրյանը, Ստեփան Զատիկյանը մեղադրվում էին ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի առաջին մասով (հակասովետական ագիտացիա և պրոպագանդա) և 67-րդ հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը մասնակցելը) [ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 5, թթ. 10-15]:

ԱՄԿ հիմնադիրների դատավարությունից և կալանավորումից հետո, կուսակցության գործունեությունը համակարգում և փաստացի դեկավարում է Պարույր Հայրիկյանը: Այդ ժամանակահատվածում նրանք տպագրում են «Ցասում» և «Երկունք» թռուցիկները, որտեղ անկախության համար պայքարի կոչեր են արվում [Հարությունյան, 2014, 122]: Այս իրադարձություններին հաջորդում է նոր կալանավորումներ և ԱՄԿ գործով երկրորդ դատավարությունը, որտեղ Պարույր Հայրիկյանը, Աշոտ Նավասարդյանը, Հակոբ Աշիկյանը, Աշոտ Խաչատրյանը, Ռաֆայել Բարսեղովը մեղադրվում և կալանավորվում են ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի առաջին մասով (հակասովետական ագիտացիա և պրոպագանդա) և 67-րդ հոդվածով (առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությունը, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը մասնակցելը) [ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 7, թթ. 10-11]:

Ազգային Միացյալ կուսակցությունը շարունակում է իր գործունեությունը մինչև ԽՍՀՄ փլուզումը: ԱՄԿ հիմնադրումից մինչև ԽՍՀՄ փլուզում շարունակվում են ամկականների նկատմամբ հալածանքներն ու տասնյակ դատավարությունները: Խորհրդային բիրտ և դաժան իրականության մեջ, հայ անկախականներն անդրավելիորեն շարունակում էին պայքարել ազատ և անկախ Հայաստանի համար: Նրանցից շատերը բանտից ազատ արձակվելուց հետո կրկին նոր թափով էին շարունակում պայքարը՝ ենթարկվելով նոր կալանավորումների: ԱՄԿ հիմնադիրներ Շահեն Հարությունյանը, Հայկազ Խաչատրյանը, Ստեփան Զատիկյանը, ինչպես նաև Պարույր Հայրիկյանը, Ազատ Արշակյանը, Աշոտ Նավասարդյանը, Ռազմիկ Մարկոսյանը, Ռազմիկ Զոհրաբյանը և ուրիշներ, տարբեր դատավարությունների շրջանակում հայտնվում էին բանտերում [Հայոց Պատմություն, 2016, 140-142]:

ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանը 1985 թ. «Los Angeles Herald Examiner» ամերիկյան ամսագրին տրված հարցրագրույցում պատմելով ԱՄԿ –ի մասին, նշել էր. «Մեր

**Այլախոհական առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման դինամիկան Խորհրդային Հայաստանում 1960-ականների սկզբին**

նպատակն էր կառուցել ազատ և միացյալ Հայաստան՝ առանց կոմունիզմի: Մենք ցանկանում էինք Հայաստանին միացնել հայկական Նախիջևանը և Ղարաբաղը, որոնք օրենքով պատկանում էին մեզ» [A dissident's tale of Soviet repression in his native Armenia, 1985]:

Հարկ ենք համարում նշել, որ այս հոդվածի բովանդակությամբ պայմանավորված, ԱՄԿ-ն ներկայացնում ենք՝ որպես Խորհրդային Հայաստանում ընդհատակյա կազմակերպություններից մեկը, որն իր գործունեությունն է ծավալել 1960-ական թվականներից սկիզբ առած այլախոհական շարժումների ժամանակաշրջանում: Սակայն կարևոր ենք համարում ընդգծել, որ Խորհրդային Հայաստանում ձևավորված և մինչև ԽՍՀՄ փլուզումը շարունակված՝ շուրջ քառորդ դար տևողությամբ ակտիվ գաղափարա-քաղաքական պայքարը, որը նոր որակ և մոտեցում էր ամբողջ Խորհրդային Միությունում, անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրության ենթարկել նաև այլ ասպեկտներում և համատեքստում, որն էլ կներկայացնենք առանձին հոդվածի միջոցով, որտեղ մանրամասնորեն կուսումնասիրենք և կքննարկենք ԱՄԿ ծրագիրը, կանոնադրությունը, երդման տեքստը, դատավարությունները, ինչպես նաև ԱՄԿ-ի քաղաքական բովանդակությունը և համախորհրդային միջազգային կառույց լինելը:

1967 թ. որոշվում է Պարույր Հայրիկյանի գլխավորությամբ, ստեղծել ԱՄԿ-ին կից գործող երիտասարդական կառույց, որի հիմնական նպատակը պետք է լիներ ապագա ԱՄԿ-ականների պատրաստումը [Հայրիկյան, 2016, 8]: ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանի առաջարկով խումբը կոչվում է «Շանթ»: Խմբի ղեկավար Պարույր Հայրիկյանը պատմում է, որ խումբն ուներ 14 անդամ, որտեղ ինքը ներգրավվել է իր և երկու համադասարանցիների կողմից 1965 թ.՝ դեռևս դպրոցական տարիներին ստեղծված «Անխախտ եռյակ», այնուհետև վերանվանված՝ «Հայկական երիտասարդական միություն» խմբի մի քանի անդամներին: Խումբը տարածել է հայրենասիրական, անկախությանը նվիրված թռուցիկներ՝ բորբոքելով հայրենասիրական կրքեր հասարակական տարբեր շրջանակներում: Խումբն ուներ ղեկավար կազմ՝ բաղկացած 3 հոգուց՝ Պարույր Հայրիկյան, Ազատ Արշակյան և Կարո Ջղալյան, ովքեր ընտրվել էին ընդհանուր ժողովի արդյունքում [Պարույր Հայրիկյան, 24.08.2023]: «Շանթ» խումբը բացահայտվել է Պետական անվտանգության կոմիտեի կողմից՝ ԱՄԿ-ի տպագրված «Փարոս» թերթի տարածման բացահայտման պատճառով [ՀԱԱ ֆ. 1191, ց. 20, գ. 7, թ. 4]:

**Եզրակացություններ:** Խորհրդային Միությունում տեղի ունեցած ներքաղաքական փոփոխությունները, որը պատմության մեջ հայտնի է «Խրուշչովյան հալոցք» անունով, ինչպես նաև 1960-ական թվականներից սաստկացող Սառը պատերազմի արդյունքում Խորհրդային գաղափարախոսության հիմքում առաջացած «գաղափարական ճաքերը», պարարտ հող ստեղծեցին ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում ազատամիտ և հայրենասիրական շրջանակների համար՝ այլախոհական մտքի ձևավորման համար: Խորհրդային տարբեր ժողովուրդներ սկսեցին քննարկել և բարձրաձայնել նոր գաղափարներ, որոնք հակասում էին Խորհրդային պետական գաղափարախոսությանը: Այլախոհությունը և այլախոհական շարժումները հիմնականում լայնորեն տարածվեցին ԽՍՀՄ կազմի մեջ մտնող Ուկրաինայում, Հայաստանում, Վրաստանում, Լատվիայում, Լիտվայում և Էստոնիայում: Այլախոհները

պայքարում էին ԽՍՀՄ-ից անկախանալու և սեփական պետություններն ունենալու, մարդու իրավունքների պաշտպանության և այլ մշակութային, սոցիալական, կրոնական հարցերի համար: Առաջնորդվելով «Իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է» հայտնի սկզբունքով՝ այլախոհները նույնպես մաս կազմեցին Սառը պատերազմին՝ հետապնդելով իրենց ազգային շահերն ու նպատակները: Ըստ էության, այլախոհությունն ու այլախոհական շարժումները ԽՍՀՄ-ի համար երկրորդ գաղափարական հակամարտության ճակատն էին ստեղծել՝ Արևմտյան բևեռի հետ ընթացող Սառը պատերազմին զուգահեռ:

Այլախոհական շարժումները լայնորեն տարածում գտան նաև Խորհրդային Հայաստանում, որտեղ այլախոհությունն ունենում էր թե՛ անհատական և թե՛ կազմակերպված բնույթ: Այլախոհական մտքի զարգացման և այլախոհական շարժումների ձևավորման համատեքստում կարևոր նշանակություն են ունեցել Խորհրդային Հայաստանում ձևավորված շուրջ մեկ տասնյակ կազմակերպությունները, որոնք տարբեր ժամանակազրական բաժանումներով առաջացել և գործել են 1960-80-ական թվականների ընթացքում: Սույն հոդվածում, մենք քննարկեցինք 1960-ական թվականների սկզբին Խորհրդային Հայաստանում ձևավորված առաջին այլախոհական կազմակերպությունները, ներկայացրինք այդ կազմակերպությունների գործունեության հիմնական կետերը:

Հայկական այլախոհության հիմքում մեծապես ընկած է անկախ Հայաստանի համար պայքարը, որի ձևավորման համար կարևոր դեր և նշանակություն է ունեցել 1966 թվականին հիմնադրված Ազգային Միացյալ կուսակցությունը: Այս կազմակերպության գլխավոր խնդիրն էր ազատել հայ ժողովրդին Խորհրդային գաղութացումից և ստեղծել անկախ Հայաստան: ԱՄԿ-ն միակ կազմակերպությունն էր Խորհրդային Հայաստանում, որը ձևավորված լինելով դեռևս 1960-ական թվականներին, թեև դաժան հետապնդումների, բռնաճնշումների, բանտարկությունների, արքայադատների, շարունակեց իր գործունեությունը մինչև ԽՍՀՄ փլուզումը: ԱՄԿ-ն իր ստեղծումով ամբողջացրեց մինչև այդ հայ հայրենասիրական շրջանակներում արծարծվող անկախությանը միտված գաղափարները և կազմակերպված բնույթ հաղորդեց Հայաստանի անկախության համար պայքարին:

### **Գրականության ցանկ**

**Ավետիսյան Ժ., 2005**, Ես գնացի Կոմիտասի այգի (1966 ապրիլի 24), Երևան, Բնօրրան:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

Ֆ. 1191, ց.20, գ. 2:

Ֆ. 1191, ց.20, գ. 4:

Ֆ. 1191, ց.20, գ. 5:

Ֆ. 1191, ց. 20, գ. 7:

Հայոց Պատմություն, Հատոր IV, գիրք երկրորդ, 2016, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ:

**Հարությունյան Շ., 2024**, Ազգային միացյալ կուսակցության հիմնադրումը և նրա դերն ու նշանակությունը Խորհրդային Հայաստանում 1960-80-ական թթ. ընթացող այլախոհական շարժման ընթացքում, Երևան, Գիտական Արցախ, № 1(20):

**Այլախոհական առաջին կազմակերպությունների առաջացումը և գաղափարական զարգացման  
դինամիկան Խորհրդային Հայաստանում 1960-ականների սկզբին**

**Հարությունյան Վ., 2014**, Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում, Երևան, Վան Արյան:

**Հայրիկեան Պ., 2016**, Իմ բանտային յուշերից, Գիրք Ա 1965-1973, Երևան, ԱԻՄ:

**Մանուկյան Ա., 2005**, Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988 թթ., Երևան, Ամբոց գրուպ հրատ.:

**Մանուկյան Ա., 2017**, Այլախոհության դրսևորման փուլերը Խորհրդային Հայաստանում, Հայոց պատմության հարցեր, Երևան, Պատմության ինստիտուտ:

Շահեն Հարությունյան անտիպ հուշագրություն, «ԱՄԿ հիմնադրում և կազմակերպում», ՄԱՍ 1:

Պարույր Հայրիկյան անձնական արխիվ:

Տեսաձայնագրված հարցրագրույց Պարույր Հայրիկյանի հետ, հոդվածի հեղինակ՝ Շահեն Հարությունյանի կողմից:

A dissident's tale of Soviet repression in his native Armenia, 1985, Los Angeles Herald Examiner.

**Applebaum A., 2012**, Iron Curtain: The Crushing of Eastern Europe, 1944-1956, Knopf Doubleday Publishing Group.

**Bittner S. V., 2008**, The Many Lives of Khrushchev's Thaw: Experience and Memory in Moscow's Arbat, Cornell University Press.

**McLoughlin B., McDermott K., 2002**, Stalin's Terror: High Politics and Mass Repression in the Soviet Union, Palgrave Macmillan UK.

**Алексеева Л., 2012**, История инакомыслия в СССР : новейший период, Москва, Моск. Хельсинк. Группа.

**Бобков Ф., 2021**, Как готовили предателей. Начальник политической контрразведки свидетельствует..., Родина, Москва.